



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՈՐՈՇ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ՝ ԲՈՒՀԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	2
1.1 Ընդհանուր վիճակագրական տվյալներ	2
2. Հոսքի ընտրության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա	3
3. Դպրոցի տիպի ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա	7
4. Կրկնուսույցի մոտ պարապելու ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա	8
5. Բուհ ընդունվելու համար 2016թ. միասնական քննություններին մասնակցելու ցանկությամբ պայմանավորված սովորողների առաջադիմության ուսումնասիրություն	11
5.1 Միասնական քննություններին մասնակցելու ցանկություն հայտնաձևների առաջադիմության ուսումնասիրություն	11
5.2 Միասնական քննություններին մասնակցել ցանկացող սովորողների կողմից քննական առարկաների հայտագրման նախընտրությունները	13
5.3 2016թ. միասնական քննություններին դրական գնահատականներ ստացածների և բուհ ընդունվածների արդյունքները	15
6. Գործոնների դասակարգումը ըստ ազդեցության աստիճանի	18
Եզրակացություն	21
Գրականության ցանկ	25
Հավելված 1	26
Հավելված 2	27

12-րդ դասարանում սովորողների առաջադիմության վրա ազդող որոշ գործոնների վերլուծություն և աշակերտների՝ բուհերի ընդունելության միասնական քննություններին մասնակցելու կողմնորոշվածության վերաբերյալ


1. Ներածություն

2016 թվականի փետրվար-մարտ ամիսներին Գնահատման և թեստավորման կենտրոնը Հայաստանի Հանրապետության 50 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող 12-րդ դասարանցիների շրջանում իրականացրել է <<Հայոց լեզու>> և <<Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր>> առարկաներից սովորողների առաջադիմության ընթացիկ արտաքին գնահատում, որի ընթացքում սովորողները մասնակցել են նաև աշակերտների հարցմանը՝ լրացնելով հարցաթերթ (տե՛ս հավելված 1): Ուսումնասիրությունը կատարվել է 17 ավագ դպրոցում, 27 միջնակարգ դպրոցում, 6 վարժարանում: Սովորողների հարցման նպատակն է եղել պարզել, թե որքանով են 12-րդ դասարանցիները կողմնորոշված իրենց հետագա ուսման և բուհի ընդունելության միասնական քննություններին մասնակցելու հարցերում, ինչպես նաև պարզել, թե հոսքային ուսուցումը որքանով է նպաստում սովորողների պատրաստվածության տարբեր մակարդակների դրսևորմանը: Ուսումնասիրության նպատակն է եղել նաև այն գլխավոր գործոնների բացահայտումը, որոնք էական ազդեցություն ունեն աշակերտների հոսքի ընտրության, ինչպես նաև բուհի ընդունելության քննություններին մասնակցելու կողմնորոշման հարցերում: Այդ նպատակով կիրառվել է ցրվածքային վերլուծության մեթոդը (ANOVA), իսկ գլխավոր գործոնները առանձնացնելու համար՝ գլխավոր բաղադրիչի վերլուծության մեթոդը [1]: Բազմակի գծային ռեգրեսիայի եղանակով իրականացվել է նաև ռեգրեսիոն վերլուծություն [2]: Կիրառվել է IBM SPSS, MS Excel, MS Access, MS SQL ծրագրային գործիքակազմը:

1.1 Ընդհանուր վիճակագրական տվյալներ

Ուսումնասիրության ընտրանքում ընդգրկված են այն աշակերտները, որոնք մասնակցել են և՛ հայոց լեզվի, և՛ հանրահաշիվի ընթացիկ արտաքին գնահատմանը և լրացրել են աշակերտի հարցաթերթ: Հարցմանը մասնակցել են 2656 աշակերտ՝ 1459

աղջիկ (55%) և 1197 տղա (45%): Սովորողների միջին գնահատականը 10 միավորային համակարգում հետևյալն են. հայոց լեզվի միջին միավորը 5.79 է (ստանդարտ սխալը 0.022 է, ստանդարտ շեղումը՝ 0.159), հանրահաշվինը՝ 4.63 (ստանդարտ սխալը 0.029 է, ստանդարտ շեղումը՝ 0.154): Ստորև ներկայացված են <<Հայոց լեզու>> և <<Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր>> (այսուհետև հանրահաշիվ) առարկաների միավորների բաշխման հիստոգրամները:



2. Հոսքի ընտրության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

Հարցված աշակերտների բաշխումն ըստ հոսքերի հետևյալն է. հումանիտար հոսք՝ 30%, տնտեսագիտական հոսք՝ 15%, բնագիտական հոսք՝ 12%, ընդհանուր հոսք՝ 32% և ֆիզմաթ հոսք՝ 11%: Ըստ հոսքերի սովորողների անհամաչափությունը պայմանավորված է ընտրված դպրոցներում առկա բաշխվածություններով:

Սովորողների առաջադիմության միջին միավորների բաշխվածությունն ըստ հոսքերի ներկայացված է աղյուսակ 1-ում¹:

¹ Աղյուսակներում մզեցված են միջին միավորների մեծագույն արժեքները, իսկ քննարկվող խմբերի միջին միավորները, երբ այդ խմբերի միջև առկա է նշանակալի տարբերությունները (0.5 և ավելի միավոր), նշված է գույնով:

Սովորողների առաջադիմությունը ըստ հոսքերի				
Հոսքեր	Սովորողների առաջադիմությունը	Հայոց լեզվի միջին միավորը	Հանրահաշվի միջին միավորը	Սովորողների թիվը (%-ներով)
Բնագիտական		5.79	4.80	12%
Հումանիտար		5.90	3.94	30%
Ընդհանուր		5.53	4.44	32%
Տնտեսագիտական		5.98	5.22	15%
Ֆիզմաթ		5.95	6.14	11%

Հայոց լեզվի ամենաբարձր միջին միավորը տնտեսագիտական հոսքում սովորողներին է եղել, իսկ ընդհանուր հոսքում ամենացածր միջին միավորը նշանակալիորեն ցածր է բոլոր մյուս հոսքերի սովորողների միջին միավորներից: Հանրահաշվից սովորողների առաջադիմության ամենաբարձր միջին միավորը եղել է ֆիզմաթ հոսքում, որը նշանակալիորեն բարձր է (0.9-2.1 միավորով) բոլոր մյուս հոսքերի սովորողների միջին միավորների ցուցանիշներից: Հումանիտար հոսքում սովորողների միջին միավորը (նվազագույն դրական շեմը շահաթահարող) ամենացածրն է: Նման արդյունք դիտարկվել է նաև այլ հետազոտության շրջանակում [3, էջ 3]: Կարելի է եզրակացնել, որ հումանիտար հոսքում <<Հանրահաշիվ> առարկայի ուսուցումը չի կարևորվում:

Այն հարցին, թե <<Որքանո՞վ ես օգտակար համարում հոսքային ուսուցումը միասնական քննություններին պատրաստվելու հարցում>> սովորողների 44%-ը պատասխանել է, որ <<Միանգամայն օգտակար է>>, 39%-ը՝ <<Մասամբ է օգտակար>>, 6%-ը՝ <<Գրեթե օգտակար չէ>> և 4%-ը՝ <<Բացարձակապես օգտակար չէ>>, սովորողների 7%-ը չի պատասխանել այս հարցին: Մեծամասնության համար հոսքային ուսուցումը միանգամայն և մասամբ օգտակար է միասնական քննություններին պատրաստվելու հարցում: Աղյուսակ 2-ից նկատում ենք, որ տարբեր կարծիքներ արտահայտած սովորողների առաջադիմության միջին միավորները էականորոն չեն տարբերվում:

Սովորողների առաջադիմությունը ըստ նրանց արտահայտած կարծիքի <<Որքանով էս օգտակար համարում հոսքային ուսուցումը միասնական քննություններին պատրաստվելու հարցում>>		
Սովորողների կարծիքը	Հայոց լեզվի միջին միավորը	Հանրահաշվի միջին միավորը
Միանգամայն օգտակար է	5.78	4.67
Մասամբ է օգտակար	5.86	4.66
Գրեթե օգտակար չէ	5.98	4.72
Բացարձակապես օգտակար չէ	5.67	4.61

Թեպետ ամենաբարձր միջին միավորները <<Գրեթե օգտակար չէ>> կարծիք արտահայտող սովորողների շրջանում է եղել, բայց նրանք կազմում են սովորողների ընդհանուր համակազմի ընդամենը 6%-ը: Այս աշակերտների 74%-ը ավագ դպրոցում, 17%-ը միջնակարգ դպրոցում և 9%-ը վարժարանում սովորողներն են: Այս սովորողների 43%-ը հումանիտար, 20%-ը ընդհանուր, 19%-ը տնտեսագիտական, 11%-ը ֆիզմաթ և 8%-ը բնագիտական հոսքերից են:

Հոսքի ընտրության կողմնորոշման հարցում մեծ դեր է ունենում ծնողների, ընկերների և սովորողի նախասիրության ազդեցությունը: <<Ինչո՞ւ էս ընտրել այս հոսքը: Նշի՛ր հիմնական պատճառը>> հարցին սովորողների 10%-ը պատասխանել է՝ <<Ծնողներս են խորհուրդ տվել>>, 6%-ը՝ <<Ընկերներս են խորհուրդ տվել>>, 42%-ը՝ <<Այդ հոսքում խորությամբ ուսումնասիրում են իմ սիրելի առարկաները>>, 24%-ը՝ <<Պատրաստվում եմ բուհի ընդունելության քննություններ հանձնել այն առարկաներից, որոնք այս հոսքում խորությամբ են ուսումնասիրում>> և <<Այլ>> պատասխան նշել են սովորողների 6%-ը: Սովորողների 12%-ը չի պատասխանել այս հարցին:

Սովորողների առաջադիմությունը ըստ հոսքի ընտրության հիմնական պատճառի				
Սովորողի հիմնական պատճառը	Սովորողների առաջադիմությունը	Հայոց լեզվի միջին միավորը	Հանրահաշվի միջին միավորը	Սովորողների թիվը (%-ը)
Ծնողներս են խորհուրդ տվել		5.49	4.42	263 (10%)
Ընկերներս են խորհուրդ տվել		5.36	4.21	148 (6%)
Այդ հոսքում խորությամբ ուսումնասիրում են իմ սիրելի առարկաները		5.84	4.72	1103 (42%)
Պատրաստվում եմ բուհի ընդունելության քննություններ հանձնել այն առարկաներից, որոնք այս հոսքում խորությամբ են ուսումնասիրում		6.04	4.84	640 (24%)
Այլ		5.92	4.47	170 (6%)
Չեն պատասխանել		5.46	4.37	242 (12%)
				2656 (100%)

Ինչպես նկատում ենք աղյուսակ 3-ից՝ ամենաբարձր միջին միավորները և՛ հայոց լեզվից (6.04), և՛ հանրահաշվից (4.84) դրսևորվել են այն աշակերտների շրջանում, որոնք հոսքի ընտրության հարցում կողմնորոշվել են բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու համար այդ հոսքում առարկաները խորությամբ ուսումնասիրելու տեսանկյունից: Հանրահաշվից ևս բարձր միջին միավոր (4.72) է արձանագրվել այն սովորողների շրջանում, որոնք հոսքի ընտրության հարցում կողմնորոշվել են սիրելի առարկաները այդ հոսքում խորությամբ ուսումնասիրելու հանգամանքով: Ե՛վ <<Պատրաստվում եմ բուհի ընդունելության քննություններ հանձնել այն առարկաներից, որոնք այդ հոսքում խորությամբ են ուսումնասիրում>>, և՛ <<Այս հոսքում ուսումնասիրում են իմ սիրելի առարկաները>> հոսքի ընտրության հարցում կողմնորոշվածների հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորները նշանակալիորեն բարձր են ծնողների կամ ընկերների խորհուրդով կողմորոշվածների և հարցաթերթի այդ հարցին չպատասխանածների միջին միավորներից:

Այն աշակերտները, որոնք հոսքի ընտրության հարցում կողմնորոշվել են բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու համար այդ հոսքում անհրաժեշտ առարկաները խորությամբ ուսումնասիրելու ցանկությամբ, կազմում են ուսումնասիրվող ընտարքում ընդգրկված սովորողների 24%-ը: Այդ սովորողների 30.5%-ը հումանիտար, 22%-ը ընդհանուր, 20%-ը տնտեսագիտական, 17%-ը բնագիտական և 10.5%-ը ֆիզմաթ հոսքերից են:


Վարժարաններում սովորողների 31%-ը, ավագ դպրոցում սովորողների 25%-ը և միջնակարգ դպրոցներում սովորողների միայն 16%-ն է բուհի ընդունելության

քննություններին պատրաստվելու տեսանկյունից ընտրել այն հոսքում սովորելը, որտեղ քննական առարկանները խորությամբ են ուսումնասիրում:


3. Դպրոցի տիպի ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

Ուսումնասիրությանը մասնակցել են Հայաստանի Հանրապետության 50 հանրակրթական ուսումնական հաստատություն՝ 17 սվագ դպրոց (1520 աշակերտ), 27 միջնակարգ դպրոց (648 աշակերտ) և 6 վարժարան (488 աշակերտ): Սովորողների բաշխումը ըստ ուսումնական հաստատությունների տիպերի ներկայացված է դիագրամ 1-ում:

Դիագրամ 1



Սովորողների առաջադիմության միջին միավորները հայոց լեզվից և հանրահաշվից ըստ հանրակրթական ուսումնական հաստատության տիպի ներկայացվում է դիագրամ 2-ում:




Հայոց լեզվից (6.23) և հանրահաշվից (5.47) ամենաբարձր միջին միավորները դիտարկվում են վարժարաններում սովորողների շրջանում: Վարժարաններում սովորողների հանրահաշվից միջին միավորը նշանակալիորեն բարձր է և՛ ավագ դպրոցի, և՛ միջնակարգ դպրոցի սովորողների միջին միավորներից:

4. Կրկնուսույցի մոտ պարապելու ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

<<Բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու եղանակներից ո՞րն են աշակերտները համարում իրենց համար առավել արդյունավետ>> հարցին սովորողների 17%-ը պատասխանել է *<<Ինքուրույն աշխատանքը>>*, 15%-ը *<<Հոսքային ուսուցմամբ սովորելը>>*, 57%-ը *<<Կրկնուսույցի մոտ պարապելը>>* 11%-ը նշել է այլ պատասխան: Այսպիսով, սովորողների գերակշռող մասը նախընտրում է կրկնուսույցի մոտ պարապելը (տե՛ս դիագրամ 3):

Դիագրամ 3



Ինչպես նկատում ենք աղյուսակ 4-ից՝ կրկնուսույցի մոտ պարապել նախընտրողների առաջադիմությունը երկու հետազոտվող առարկաներից ամենաբարձրն է՝ հայոց լեզվի միջին միավորը 5.95 է, իսկ հանրահաշվինը՝ 4.73:

Աղյուսակ 4

Սովորողների առաջադիմությունը ըստ բուհի քննություններին պատրաստվելու արդյունավետ եղանակի նախընտրության			
Սովորողների առաջադիմությունը	Հայոց լեզվի միջին միավորը	Հանրահաշվի միջին միավորը	Սովորողների թիվը (%-ը)
Արդյունավետ եղանակը			
Ինքնուրույն աշխատանքը	5.50	4.56	448 (17%)
Հոսքային ուսուցմամբ ավարելը	5.75	4.72	407 (15%)
Կրկնուսույցի մոտ պարապելը	5.95	4.73	1514 (57%)
Այլ	5.61	3.67	287(11%)

Նման դրսևորում նաև դիտարկվել է նախորդ հետազոտության վերլուծությունում [3, էջ 11]: Կրկնուսույցի մոտ պարապել նախընտրողների հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորները մի փոքր բարձր են մնացած բոլոր տիպի եղանակներ նախընտրողների միջին միավորներից: Աղյուսակ 4-ից երևում է, որ իրոք, կրկնուսույցի մոտ պարապել նախընտրողների շրջանում և՛ հայոց լեզվի, և՛ հանրահաշվի միջին միավորները ամենաբարձրն են, բայց այդ տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չեն: Կարող ենք եզրակացնել, որ սովորողները, անկախ արդյունավետ եղանակի ընտրությունից, 12-րդ դասարանում երկրորդ կիսամյակում ավելի լրջորեն են սովորում և ամրապնդում իրենց գիտելիքները ուսումնասիրվող

առարկաներից: Նկատենք նաև, որ <<Մյլ>> եղանակ նշողների հանրահաշվի միջին միավորը (նվազագույն դրական միավորի շեմը չհաղթահարող) նշանակալիորեն ցածր է բոլոր մնացած տիպի արդյունավետ եղանակներ նախընտրողների առաջադիմության միջին միավորներից: Նշենք, որ <<Մյլ>> պատասխան են տվել հիմնականում այն սովորողները, որոնք ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո զորակոչվելու են կամ հետագայում սովորել չեն ցանկանում, այլ՝ միայն դպրոցն ավարտելով:

Հարկավոր է նշել, որ ավագ դպրոցներում (5.99) և վարժարաններում (6.18) կրկնուսույցի մոտ պարապել նախընտրող սովորողների հայոց լեզվի միջին գնահատականը բարձր է ուսումնասիրության մեջ ընդգրկված ընդհանուր համակազմի հայոց լեզվի միջին գնահատականից (5.79), իսկ հանրահաշվից միայն վարժարաններում սովորողների միջին գնահատականն է (5.25) բարձր ողջ համակազմի հանրահաշվի միջին միավորից (4.63) (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Կրկնուսույցի մոտ պարապել նախընտրողների առաջադիմությունը ըստ ու.ս. հաստատության տիպի		
Տվորողների առաջադիմությունը	Հայոց լեզվի միջին միավորը	Հանրահաշվի միջին միավորը
Դպրոցի տիպը		
Ավագ դպրոց	5.99	4.58
Միջնակարգ դպրոց	5.61	4.61
Վարժարան	6.18	5.25

Ինչպես նկատում ենք աղյուսակ 5-ից՝ կրկնուսույցի մոտ պարապել նախընտրողների շրջանում ամենաբարձր միջին միավորները վարժարաններում սովորողների շրջանում են դրսևորվել. հայոց լեզվի միջին միավորը նշանակալիորեն բարձր է միջնակարգ դպրոցներում սովորողների միջին միավորներից, իսկ հանրահաշվի դեպքում՝ և՛ ավագ դպրոցի, և՛ միջնակարգ դպրոցի սովորողների միջին միավորներից: Հարկավոր է նշել, որ ինչպես հայոց լեզվի, այնպես էլ հանրահաշվի դեպքում ամենացածր միջին միավորները արձանագրվել են միջնակարգ դպրոցներում սովորողների շրջանում:


5. Բուհ ընդունվելու համար 2016թ. միասնական քննություններին մասնակցելու ցանկությամբ պայմանավորված սովորողների առաջադիմության ուսումնասիրություն

5.1 Միասնական քննություններին մասնակցելու ցանկություն հայտնաձևների առաջադիմության ուսումնասիրություն

<Մասնակցելո՞ւ ես միասնական քննություններին>> հարցին սովորողների 60%-ը պատասխանել է <<Այո>>, 30%-ը՝ <<Ոչ>> և սովորողների 10%-ը չի պատասխանել տրված հարցին:

Ինչպես նկատում ենք, 12-րդ դասարանում ուսումնասիրվող հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների գերակշիռ մասը արդեն կողմնորոշված է միասնական քննություններին մասնակցելու հարցում և նրանց առաջադիմության միջին միավորները և՛ հայոց լեզվից (6.02), և՛ հանրահաշվից (4.93), նշանակալիորեն բարձր են ուսումնասիրության ժամանակահատվածում միասնական քննություններին չմասնակցելու ցանկություն արտահայտած սովորողների հայոց լեզվի (5.50) և հանրահաշվի (4.19) և հարցաթերթի վերոնշյալ հարցին չպատասխանած սովորողների հայոց լեզվի (5.22) և հանրահաշվի (4.16) միջին միավորներից (տե՛ս դիագրամ 4):

Դիագրամ 4



Ուսումնասիրվել է սովորողների այն համակազմը, որոնք արդեն կողմնորոշված են միասնական քննություններին մասնակցելու հարցում:

Միասնական քննություններին մասնակցելու ցանկություն են հայտնել վարժարաններում սովորողների 73%-ը (356 աշակերտ), ավագ դպրոցներում

սովորողների 62%-ը (949 աշակերտ) և միջնակարգ դպրոցներում սովորողների 40%-ը (257 աշակերտ): Ինչպես նկատում ենք, միասնական քննություններին մասնակցելու ցանկությունը ավելի վառ դրսևորվում է վարժարանում սովորողների շրջանում, ուստի կարելի է եզրակացնել, որ սովորողները ընտրում են վարժարաններում սովորելը՝ արդեն կողմնորոշված իրենց հետագա կրթական ծրագրերով:

Դիտարկվել է դպրոցի տիպից կախված այն սովորողների առաջադիմության միջին միավորները, ովքեր ցանկանում են մասնակցել միասնական քննություններին (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Միասնական քննություններին մասնակցելու ցանկություն հայտնած սովորողների առաջադիմությունը ըստ ուս. հաստատության տիպի				
Դպրոցի տիպը	Սովորողների առաջադիմությունը	Հայոց լեզվի միջին միավորները	Հանրահաշվի միջին միավորները	Սովորողների թիվը
Ավագ դպրոց		5.99	4.74	949
Միջնակարգ դպրոց		5.78	4.68	257
Վարժարան		6.28	5.62	356


Ամենաբարձր միջին միավորները դիտարկվել է վարժարաններում սովորողների շրջանում: Հարկավոր է ընդգծել, որ վարժարանների ֆիզմաթ հոսքում սովորողների հանրահաշվի միջին միավորը (0.7-3.1 միավորով) նշանակալիորեն բարձր է մնացած բոլոր հոսքերում սովորողների միջին միավորներից, իսկ հայոց լեզվի միջին միավորը աննշան, բայց բարձր է ընդհանուր հոսքում սովորողների շրջանում (0.07-0.45 միավոր):

Բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու հարցաթերթում բերված երեք արդյունավետ եղանակները (ինքնուրույն աշխատանք, հոսքային ուսուցում և կրկնուսույցի մոտ պարապել) ընտրած հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորները բարձր են այն աշակերտների շրջանում, որոնք պատրաստվում են մասնակցել միասնական քննություններին՝ չմասնակցելու ցանկություն հայտնածների համեմատությամբ:

5.2 Միասնական քննություններին մասնակցել ցանկացող սովորողների կողմից քննական առարկաների հայտագրման նախընտրությունները

Գնահատման և թեստավորման կենտրոնի իրականացրած այս ուսումնասիրության (12-րդ դասարանցիների շրջանում արտաքին ընթացին գնահատում և աշակերտների հարցում) ժամանակահատվածը համընկնում է 12-րդ դասարանում սովորողների միասնական քննություններին մասնակցելու հայտագրման ժամանակահատվածի հետ (փետրվար-մարտ ամիսներ): Այն աշակերտները, որոնք հարցաթերթում նշել են, որ ցանկանում են մասնակցել միասնական քննություններին նշել են նաև, այն առարկաները, որոնցից պետք է քննություն հանձնեն: Ենթադրվում է, որ սովորողները մեծամասամբ արդեն կողմնորոշված են իրենց հետագա կրթական ծրագրերի առումով և իմացել են, թե որ առարկաներից է անհրաժեշտ միասնական քննություններ հանձնել բուհի ընդունելության մրցույթին մասնակցելու համար, և հարցաթերթում նրանց նշած պատասխանները նկարագրում է սովորողների՝ միասնական քննություններին մասնակցելու հայտագրման արդյունքները (տե՛ս դիագրամ 5):

Դիագրամ 5



Դիտարկվել են տարբեր առարկաներից միասնական քննություններ հանձնել ցանկացողների առաջադիմության միջին միավորները հայոց լեզվից և հանրահաշվից (տե՛ս աղյուսակ 6): Ինչպես նկատում ենք՝ «Հայոց լեզու» առարկայից ամենաբարձր միջին միավորը (6.12) օտար լեզուներից միասնական քննություններ հանձնելու ցանկություն արտահայտածների մոտ է դրսևորվել, երկրորդ բարձր միջին միավորը (6.00) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննություն հանձնել պատրաստվողների շրջանում է: Պատկերը պարզ է, օտար լեզուներից միասնական քննություններ հանձնել պատրաստվողների համար հայոց լեզուն ևս համարվում է մրցույթային առարկա: Այս սովորողների 41%-ը հումանիտար, 23%-ը տնտեսագիտական, 20%-ը ընդհանուր, 9%-ը ֆիզմաթ և 7%-ը բնագիտական հոսքերից են:

Աղյուսակ 6

Սովորողների առաջադիմությունը ըստ միասնական քննություններին մասնակցել ցանկացողների՝ քննական առարկաների հայտագրման մոդելի					
Սովորողների առաջադիմությունը Առարկաներ, որոնցից սովորողները պետք է հանձնեն միասնական քննություններ	Տվյալ առարկայից միասնական քննություն հանձնելու ցանկություն հայտնածներ	Տվյալ առարկայից միասնական քննություն չհանձնողներ	Տվյալ առարկայից միասնական քննություն հանձնելու ցանկություն հայտնածներ	Տվյալ առարկայից միասնական քննություն չհանձնողներ	Միասնական քննություններ հանձնել ցանկացողները (ըստ քննական առարկաների)
	Հայոց լեզվի միջին միավորը	Հանրահաշվի միջին միավորը	Թիվը (տոկոսը)		
Հայոց լեզու և հայ գրականություն	6.00	5.63	4.54	4.70	1106 (42%)
Մաթեմատիկա	5.88	5.72	5.19	4.25	1086 (41%)
Օտար լեզու	6.12	5.61	4.75	4.57	906 (34%)
Հայոց պատմություն	5.96	5.77	4.03	4.69	219 (8%)
Համաշխարհային պատմություն	5.28	5.79	3.78	4.64	22 (1)
Կենսաբանություն	5.87	5.78	4.75	4.62	238 (9%)
Ֆիզիկա	5.84	5.78	5.92	4.49	259 (10%)
Քիմիա	5.93	5.77	4.91	4.61	187 (7%)
Աշխարհագրություն	5.51	5.79	3.92	4.65	70 (3%)

Հայոց լեզվից ցածր միջին միավորները <<Աշխարհագրություն>> (5.51) և <<Համաշխարհային պատմություն>> (5.28) հանձնողների շրջանում է դրսևորվում: Այն ցածր է ամբողջ համակազմի հայոց լեզվի միջին միավորից, իսկ այդ երկու առարկաները չհանձնողների շրջանում դրսևորվել են հայոց լեզվի ամենաբարձր միջին միավորները (5.79), որը համընկնում է ամբողջ համակազմի հայոց լեզվի միջին միավորի հետ:

Հանրահաշվից ամենաբարձր միջին միավորը (5.92) դրսևորվել է ֆիզիկայից միասնական քննություն հանձնելու ցանկություն հայտնողների շրջանում, երկրորդ բարձր միջին միավորը՝ (5.19) մաթեմատիկա հանձնել պատրաստվողների շրջանում: Ֆիզիկա առարկայից միասնական քննություն հանձնել ցանկացողների 47%-ը ֆիզմաթ, 23%-ը ընդհանուր, 14%-ը տնտեսագիտական, 10%-ը բնագիտական և 6%-ը հումանիտար հոսքերից են: Օրինակ՝ ֆիզիկա հանձնել ցանկացողների համար որոշ մասնագիտությունների դեպքում մաթեմատիկան բուհի ընդունելության մրցույթային առարկա է, այդ իսկ պատճառով սովորողները ավելի զգոն են սովյալ առարկայից իրենց առաջադիմության հարցում: Ֆիզիկա հանձնողների հանրահաշվի միջին միավորը 5.92 է, իսկ ֆիզիկա չհանձնողներինը՝ 4.49: Առկա է զգալի տարբերություն սովորողների վերոնշյալ երկու խմբերի առաջադիմության միջին միավորների միջև:

Հանրահաշվի միջին միավորը նաև բարձր է (4.70) <<Հայոց լեզու և հայ գրականություն>> առարկայից միասնական քննություն չհանձնողների շրջանում:

Սովորողների այս բազմության 37%-ը ընդհանուր հոսքի, 22%-ը հումանիտար, 14%-ը ֆիզմաթ, 14%-ը բնագիտական և 13%-ը տնտեսագիտական հոսքերից են:

Այս հարցման արդյունքում բացահայտվել է, որ սովորողների միասնական քննություններին մասնակցելու արդեն արտահայտված ցանկությունը ազդում է նրանց պատրաստվածության վրա:

5.3 2016թ. միասնական քննություններին դրական գնահատականներ ստացածների և բուհ ընդունվածների արդյունքները


Թեպետ հարցման ժամանակ սովորողների 60%-ը պատասխանել է, որ պատրաստվում են մասնակցել միասնական քննություններին, իրականում նրանցից միայն 48%-ն (1265 դիմորդ) է հաղթահարել և անհրաժեշտ միավորներ վաստակելով միասնական քննություններից՝ 2016 թվականին ընդունվել Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ: Այս դիմորդների

30%-ը հումանիտար, 20%-ը տնտեսագիտական, 19%-ը ընդհանուր, 16%-ը բնագիտական, 15%-ը ֆիզմաթ հոսքերի սովորողներ են:


Ներկայացնում ենք նաև բուհերի ընդլայնված այն մասնագիտությունների ցանկը, որոնց համար մեր ընտրանքից թվով ավելի շատ սովորողներ են դիմել և ընդունվել (տե՛ս հավելված 2):

Մեր ընտրանքից թվով ամենաշատ դիմորդներ են ունեցել հետևյալ բուհերը. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան (<<Բուժական գործ>> և <<Ստոմատոլոգիա>> մասնագիտություններ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (<<Հաշվապահական հաշվառում և հարկում>> և <<Տնտեսագիտություն>> մասնագիտություններ), Երևանի պետական համալսարան (<<Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա>>, <<Հանրային կառավարում>>, <<Ռադիոֆիզիկա>>, <<Կառավարում>> և <<Անգլերեն լեզու և գրականություն>> մասնագիտություններ), Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան (<<Միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն լեզու>> մասնագիտություն): Ստորև ներկայացնում ենք տասը մասնագիտությունները՝ նշելով սովորողների քանակը (տոկոսը) ըստ իրենց հանրակրթական ուսումնական հաստատություններում հոսքերի:


Դիագրամ 6 (ա-ժ)




ա)




բ)




զ)




դ)




ե)




զ)




է)



ը)



թ)



ժ)

Ինչպես նկատում ենք, քննարկելով վերոնշյալ տասը մասնագիտությունները, սովորողների մեծամասնությունը տվյալ բուհի մասնագիտություններով ընդունվելու համար անհրաժեշտ ուսուցումը ստացել է քննական անհրաժեշտ առարկանները խորությամբ ուսումնասիրելու հնարավորություն ընձեռող հոսքերում: Հարկավոր է նշել նաև, որ նրանց մեծամասնության համար բուհի քննություններին պատրաստվելու արդյունավետ եղանակը կրկնուսույցի մոտ պարապելն է եղել: Սովորողների հարցման ժամանակ <<Բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու հետևյալ եղանակներից ո՞րն էս համարում քեզ համար առավել արդյունավետ>> հարցին միասնական քննություններին դրական գնահատականների ստացածների և բուհ ընդունվածների 10%-ը նախկինում նախընտրել են <<Ինքնուրույն աշխատանք>>, 11%-ը՝ <<Հոսքային ուսուցումը>>, 74%-ը՝ <<Կրկնուսույցի մոտ պարապելը>> և 5%-ը՝ <<Այլ>> արդյունավետ եղանակ:

6. Գործոնների դասակարգումը ըստ ազդեցության աստիճանի

Իրականացվել է ռեգրեսիբոն վերլուծություն՝ բազմակի գծային ռեգրեսիայի եղանակով հայոց լեզվից և հանրահաշվից արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ սովորողների դրսևորած առաջադիմության վրա ուսումնասիրված գործոնների ազդեցությունների դրական կամ բացասական բնույթը պարզելու և այդ ազդեցության չափաբաժինների մասին պատկերացումներ կազմելու համար:

Հանրահաշվից սովորողների մոտ առաջադիմությունը ներկայացվում է կանխատեսման հետևյալ գծային մոդելով, որտեղ ընդգրկված գործոններով կառուցվող հանրահաշվից սովորողների կանխատեսվող առաջադիմությունը 26%-ով բացատրում է իրական կյանքում հանրահաշվից նրանց դրսևորված առաջադիմության

փոփոխությունը: Գործոնների միջև բազմակի գծային կապը (կորելացիայի գործակիցը) միջին ուժգնության է ($R = 0.5$) [5]:

$$\begin{aligned}
 Y_{\text{հանր.}} = & 3.922 + 0.410 * (\text{միասնական քննություններին մասնակցություն}) - \\
 & -0.141 * (\text{աշակերտի սեռը}) + \\
 & +0.426 * (\text{տնտեսագիտական հոսք}) - \\
 & -0.851 * (\text{հումանիտար հոսք}) - \\
 & +1.100 * (\text{ֆիզմաթ հոսք}) + \\
 & -0.213 * (\text{հոսքի ընտրությունը ծնողների խորհրդով}) + \\
 & +0.109 \\
 & * (\text{հոսքի ընտրությունը ըստ սիրելի առարկաները խոր. ուսումնասիրելու հնար.}) + \\
 & +0.235 * (\text{ինքնուրույն աշխատանքը}) + \\
 & +0.316 * (\text{հոսքային ուսուցումը}) + \\
 & +0.314 * (\text{կրկնուսույցի մոտ պարապելը}) + \\
 & +0.302 * (\text{ավագ դպրոց}) + \\
 & + 0.792 * (\text{վարժարան}) + \varepsilon
 \end{aligned}
 \tag{1}$$

Հետևյալ (1) բազմակի գծային ռեգրեսիայի բանաձևը նկարագրում է հանրահաշվից սովորողի առաջադիմության վրա ազդող ուսումնասիրության շրջանում դիտարկված բոլոր գործոններից նրանք, որոնց գործակիցները վիճակագրորեն նշանակալի են: Կանխատեսման մոդելում գործոնների ազդեցությունները դրական կամ բացասական բնութագրվում են գործակիցների նշանով: Վերոնշյալ դիտարկված գործոնները ներկայացվել են բինար փոփոխականների տեսքով (ընդունում են 1 արժեք, եթե առկա է տվյալ հատկանիշը, և 0 արժեք՝ հատկանիշի բացակայության դեպքում): ε -ը կանխատեսման մոդելի սխալն է, որը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք հետազոտության ընթացքում հաշվի չեն առնվել:

Մոդելում ներկայացված գործոնները՝ միասնական քննություններին մասնակցելու ցանկությունը, սովորողների սեռը, սովորողների ընտրած հոսքերը՝ հումանիտար, տնտեսագիտական և ֆիզմաթ, հոսքի ընտրության հիմնական դրդապատճառը՝ հոսքի ընտրությունը ծնողների խորհրդով և հոսքի ընտրությունը ըստ սիրելի առարկաները խորությամբ ուսումնասիրելու հնարավորության, բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու համար սովորողների նախընտրելի եղանակը՝ ինքնուրույն աշխատանքը, հոսային ուսուցումը, կրկնուսույցի մոտ պարապելը, հանրակրթական ուսումնական հաստատության տիպը՝ ավագ դպրոց,

միջնակարգ դպրոց, վարժարան) բանաձևում ներկայացված են փակագծերի մեջ, իսկ դրանց առջևում գրված են համապատասխան գործոնի գործակիցներ, որոնք հանդիսանում են այդ գործոնների կշիռները: Բանաձևով ներկայացված գծային ռեգրեսիայի մոդելում բոլոր գործոնների բացակայության դեպքում սովորողների հանրահաշվի գնահատականը կլիներ 3.922, սակայն սովորողների գնահատականները բարձր կամ ցածր են այդ ցուցանիշից՝ պայմանավորված տարբեր գործոնների ազդեցությամբ:

Այժմ, որպես օրինակ, փորձենք կանխատեսել միասնական քննություններին մասնակցելու ցանկություն հայտնած, ավագ դպրոցի ֆիզմաթ հոսքի 12-րդ դասարանում սովորող աշակերտուհու հանրահաշվի գնահատականը, ով հոսքն ընտրել է ծնողների խորհրդով և նշում է, որ բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու իր նախընտրելի արդյունավետ եղանակը հոսքային ուսուցումն է:

$$Y_{\text{հանր.աշ.1}} = 3.922 + 0.410 * 1 - 0.141 * 1 - 0.851 * 1 - 0.213 * 1 + 0.316 * 1 + 0.302 * 1 = 5.696$$

Օրինակում բերված աշակերտուհու հանրահաշվի գնահատականը $Y_{\text{հանր.աշ.1}} = 5.7$ է:

Այժմ փորձենք կանխատեսել միասնական քննություններին մասնակցելու ցանկություն հայտնած, վարժարանի հումանիտար հոսքի 12-րդ դասարանում սովորող տղա աշակերտի հանրահաշվի գնահատականը, ով հոսքի ընտրությունը կայացրել է հիմնականում կողմնորոշվելով տվյալ հոսքում սիրելի առարկաները խորացված ուսումնասիրելու հնարավորությամբ և նշում է, որ բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու իր նախընտրելի արդյունավետ եղանակը կրկնուսույցի մոտ պարապելն է:

$$Y_{\text{հանր.աշ.2}} = 3.922 + 0.410 * 1 - 0.141 - 0.851 * 1 + 0.109 * 1 + 0.314 * 1 + 0.792 * 1 = 4.555$$

Երկրորդ օրինակի աշակերտի հանրահաշվի գնահատականը $Y_{\text{հանր.աշ.2}} = 4.6$ է:

Վերոնշյալ գործոնները, ըստ սովորողների առաջադիմության վրա ունեցած ազդեցության աստիճանի, բաժանվել են երեք խմբի՝ ըստ գործակիցների քանակական արժեքների:

Հանրահաշվից սովորողների առաջադիմության վրա առավելագույն ազդեցություն ունեն հոսքերի ընտրությունը՝ ֆիզմաթ և տնտեսագիտական հոսքի դեպքում դրական, իսկ հումանիտար հոսքի դեպքում՝ բացասական, վարժարանում սովորելը միջնակարգ դպրոցում սովորելու նկատմամբ, միասնական քննություններին մասնակցել ցանկանալը:

Որոշակի դրական ազդեցություն ունեն ավագ դպրոցում սովորելը, բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու համար սովորողների համար արդյունավետ եղանակները՝ ինքնուրույն աշխատանքը, հոսքային ուսուցումը և կրկնուսույցի մոտ պարապելը և որոշակի բացասական ազդեցություն ունի հոսքի ընտրությունը հիմնականում ըստ ծնողների խորհրդի:

Շատ քիչ բացասական ազդեցություն ունի աշակերտի սեռը. հանրահաշվից տղաների առաջադիմությունը շատ քիչ, բայց ցածր է աղջիկների առաջադիմությունից:

Օգտվելով քանաձևից՝ նկատում ենք, որ միասնական քննություններին մասնակցելու ցանկություն հայտնաձևների հանրահաշվի գնահատականը 0.410 միավորով բարձ է քննություն չհանձնելու ցանկություն արտահայտողների նկատմամբ մյուս բոլոր գործոնների անփոփոխ լինելու դեպքում, իսկ վարժարանում սովորող աշակերտների մոտ հանրահաշվի գնահատականը 0.792 միավորով բարձր է միջնակարգ դպրոցում սովորողների նկատմամբ, մյուս բոլոր գործոնների անփոփոխ լինելու դեպքում:

Եզրակացություն

Հոսքի ընտրության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

- Կարող ենք ասել, որ Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից իրականացվող արտաքին ընթացիկ գնահատման ուսումնասիրության ժամանակ նկատվում է, որ հոսքային ուսուցումը տարբերակում է սովորողների առաջադիմության տարբեր մակարդակների դրսևորումները <<Հայոց լեզու>> և <<Հանրահաշիվ>> առարկաներից: Տնտեսագիտական հոսքում սովորողների առաջադիմությունը հայոց լեզվից առաջանցիկ է մնացած բոլոր հոսքերում սովորողների առաջադիմությունից, իսկ հանրահաշվի դեպքում ֆիզմաթ հոսքում սովորողների շրջանում է արձանագրվում նշանակալիորեն բարձր առաջադիմություն մնացած բոլոր հոսքերում սովորողների առաջադիմության նկատմամբ:
- Ուսումնասիրության մեջ ընդգրկված 12-րդ դասարանում սովորողների մեծամասնության կարծիքով հոսքային ուսուցումը միանգամայն և մասամբ

օգտակար է միասնական քննություններին պատրաստվելու հարցում: Սակայն այս հարցին դրական (սովորողների 83%), բացասական (10%) պատասխան տված և հարցին չպատասխանած սովորողների (7%) առաջադիմության միջին միավորները նշանակալիորեն չեն տարբերվում:

- Ամենաբարձր միջին միավորները և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից ստացել են այն աշակերտները, որոնք հոսքի ընտրության հարցում կողմնորոշվել են բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու համար այդ հոսքում առարկաները խորությամբ ուսումնասիրելու տեսանկյունից:

Դպրոցի տիպի ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

- Վարժարաններում սովորողների առաջադիմությունը հայոց լեզվից և հանրահաշվից առաջանցիկ է ավագ և միջնակարգ դպրոցներում սովորողների առաջադիմության ցուցանիշներից: Վարժարանում և ավագ դպրոցում սովորողների առաջադիմության միջին միավորները հայոց լեզվից բարձր են ընդհանուր համակազմի հայոց լեզվի միջին միավորից: Վարժարաններում սովորողների հանրահաշվից միջին միավորը նշանակալիորեն բարձր է և՛ ավագ դպրոցի և՛ միջնակարգ դպրոցի սովորողների միջին միավորներից: Ավագ և միջնակարգ դպրոցների հանրահաշվի առաջադիմության միջին միավորները ցածր են ընդհանուր համակազմի միջին միավորից:

Կրկնուսույցի մոտ պարապելու ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

- Ամենաբարձր միջին միավորները երկու ուսումնասիրվող առարկաներից դրսևորվել են այն սովորողների շրջանում, որոնք բուհի քննություններին պատրաստվելու արդյունավետ եղանակը համարում են կրկնուսույցի մոտ պարապելը: Սակայն սովորողների ցուցաբերած առաջադիմության ոչ էական տարբերությունների առկայությունից կարող ենք եզրակացնել, որ 12-րդ դասարանում սովորողների համար հարցաթերթում բերված բոլոր արդյունավետ եղանակները նպաստում են սովորողների առաջադիմության նմանատիպ դրսևորումներին: Կարող ենք եզրակացնել, որ 12-րդ դասարանցիները արդեն լարել են իրենց ներուժը և անկախ արդյունավետ եղանակի ընտրությունից՝ պատրաստվում են բուհի ընդունելության քննություններին:

2016 թվականի միասնական քննություններին մասնակցելու ցանկությամբ պայմանավորված սովորողների առաջադիմության ուսումնասիրություն

- Միասնական քննություններին մասնակցելու ցանկություն արտահայտածների առաջադիմությունը նշանակալիորեն բարձր է այդ քննություններին չմասնակցելու ցանկություն հայտնածների նկատմամբ: Միասնական քննություններին մասնակցելու ցանկություն է հայտնել վարժարաններում սովորողների 73%-ը, ավագ դպրոցներում սովորողների 62%-ը և միջնակարգ դպրոցներում սովորողների 40%-ը: Ինչպես նկատում ենք, միասնական քննություններին մասնակցելու ցանկությունը ավելի վառ դրսևորվում է վարժարանում սովորողների շրջանում: Կարելի է եզրակացնել, որ սովորողները ընտրում են վարժարաններում սովորելը՝ արդեն ավելի լավ կողմնորոշված իրենց հետագա կրթական ծրագրերում:
- Միասնական քննություններին մասնակցելու համար սովորողների կողմից քննական առարկաների հայտագրման մոդելը դիտարկել ենք նրանց հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորների համադրությամբ: Կարող ենք ասել, որ այն առարկաների դեպքում, որոնցից սովորողները ցանկանում են հանձնել միասնական քննություններ և որոնց հետ զուգահեռաբար հնարավոր է, որ հայոց լեզու և հայ գրականությունը կամ մաթեմատիկան ևս հանձնեն, միջին միավորները հայոց լեզվից կամ հանրահաշվից ավելի բարձր են, ի տարբերություն այն դեպքերի, երբ հայոց լեզուն կամ հանրահաշիվը միջուկային առարկաներ չեն հանդիսանում: Օրինակ՝ անգլերեն հանձնողների համար հայոց լեզու և հայ գրականությունը ևս մրցութային առարկա է և անգլերեն հանձնողների շրջանում հայոց լեզվի բարձր միջին միավոր է դիտարկվում:
- Դիտարկումից պարզվել է նաև, որ «Հայոց լեզու» առարկայից միասնական քննություն հանձնել ցանկացողների միջին միավորը (6.00) բարձր է այդ առարկայից միասնական քննություն չհանձնողների առաջադիմության միջին միավորից (5.63), սակայն այդ երկու ցուցանիշները նշանակալիորեն չեն տարբերվում: Իսկ «Մաթեմատիկա» առարկա հանձնողների հանրահաշվի միջին միավորը (5.19) նշանակալիորեն բարձր է մաթեմատիկա չհանձնողների հանրահաշվի միջին միավորից (4.25): Կարող ենք եզրակացնել, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայոց լեզու»

առարկան պատշաճ մակարդակով է ուսուցանվում և այն սովորողները, որոնք հայոց լեզու և հայ գրականությունից միասնական քննություն չեն հանձնելու իրենց առաջադիմությամբ այդքան էլ չեն զիջում այն սովորողներին, որոնք պատրաստվում են միասնական քննություն հանձնել այդ առարկայից, սակայն նույնը չենք կարող ասել <<Հանրահաշիվ>> առարկայի պարագայում:

Միասնական քննությունները հաղթահարած և բուհ ընդունված սովորողների արդյունքները

- Դիտարկվել են նաև ուսումնասիրվող 12-րդ դասարանցիների համակազմից 2016 թվականին բուհ ընդունվածների հոսքերի բաշխումը ամենաշատ դիմորդներ հավաքագրած տասը մասնագիտություններում: Այդ մասնագիտություններով ընդունված ուսանողների մեծամասնությունը տվյալ մասնագիտությամբ բուհ ընդունվելու համար իրենց հոսքերում համապատասխան առարկաները խորությամբ են ուսումնասիրել: Եզրակացնում ենք, որ հոսքային ուսուցումը նպաստում է սովորողների ապագա մասնագիտական կողմնորոշմանը, և դիտարկված մասնագիտությունների դեպում ուսանողների 50-83%-ը համապատասխան հոսքերի նախկին 12-րդ դասարանցիներն են:

Գործոնների դասակարգումը ըստ ազդեցության աստիճանի

- Իրականացվել է սովորողների առաջադիմության վրա ազդող որոշ գործոնների ազդեցության դասակարգում: Սովորողների առաջադիմության վրա առավելագույն ազդեցություն ունեն հոսքերի ընտրությունը, վարժարանում սովորելը միջնակարգ դպրոցում սովորելու համեմատությամբ, միասնական քննություններին մասնակցելու ցանկությունը:
- Որոշակի դրական ազդեցություն ունեն` ավագ դպրոցում սովորելը միջնակարգ դպրոցում սովորելու համեմատությամբ, բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու նպատակով սովորողների համար արդյունավետ եղանակները (ինքնուրույն աշխատանքը, հոսքային ուսուցումը և կրկնուսույցի մոտ պարապելը) և որոշակի բացասական ազդեցություն ունի հոսքի ընտրությունը հիմնականում ծնողների խորհրդով:

- Շատ քիչ բացասական ազդեցություն ունի աշակերտի սեռը. հանրահաշվից տղաների առաջադիմությունը շատ քիչ, բայց ցածր է աղջիկների առաջադիմությունից այլ պայմանների հավասար լինելու դեպքում: Հայոց լեզվի պարագայում աղջիկների առաջադիմությունը նշանակալիորեն բարձր է տղաների առաջադիմությունից:

Գրականության ցանկ

1. «Բազմաչափ վիճակագրական մեթոդների կիրառությունը SPSS ծրագրային փաթեթում», Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստանը, <http://www.crrc.am/news-events/534-Դասընթաց-«Բազմաչափ-վիճակագրական-մեթոդների-կիրառությունը-SPSS-ծրագրային-փաթեթում»-թեմայով?lang=hy>
2. «Էկոնոմետրիկա. 1-ին մակարդակ՝ SPSS փաթեթի կիրառմամբ», Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստանը, <http://www.crrc.am/546-Դասընթաց-«Էկոնոմետրիկա.-1-ին-մակարդակ՝-SPSS-փաթեթի-կիրառմամբ»?lang=hy>
3. Սովորողների առաջադիմության վրա ազդող որոշ գործոններ, 2017, <http://www.atc.am/files/verlucutyunner/2017/Sovoroxneri%20aradg%20vra%20azdox%20gortsonner.pdf>, էջ 3, 11
4. 2016 թ. փետրվար-մարտ ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները, http://www.atc.am/files/verlucutyunner/2016/2016_petrvar_yntacik.pdf
5. Understanding Correlation <https://www.youtube.com/watch?v=4EXNedimDMs>
6. 2016 թ. փետրվար-մարտ ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատման էլեկտրոնային տվյալների, սովորողների հարցման բազաներ, ԳԹԿ

Հավելված 1

ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

անուն, ազգանուն

դպրոց, դասարան

1. Անցյալ տարի դու այս նույն հոսքում էիր սովորում:

- այո
- ոչ

2. Բուհի ընդունելության քննություններին պատրաստվելու հետևյալ եղանակներից ո՞րն ես համարում քեզ համար առավել արդյունավետ:

- Ինքնուրույն աշխատանքը
- Հոսքային ուսուցմամբ սովորելը
- Կրկնուսույցի մոտ պարապելը
- Այլ _____

3. Մասնակցելո՞ւ ես միասնական քննություններին:
(Եթե ոչ, ապա անցի՛ր 5-րդ հարցին:)

- այո
- ոչ

4. Ո՞ր առարկաներից ես միասնական քննություն հանձնելու:

- | | |
|--|---|
| <input type="checkbox"/> Հայոց լեզու և հայ գրականություն | <input type="checkbox"/> Կենսաբանություն |
| <input type="checkbox"/> Մաթեմատիկա | <input type="checkbox"/> Ֆիզիկա |
| <input type="checkbox"/> Օտար լեզու | <input type="checkbox"/> Քիմիա |
| <input type="checkbox"/> Հայոց պատմություն | <input type="checkbox"/> Աշխարհագրություն |
| <input type="checkbox"/> Համաշխարհային պատմություն | |

5. Որքանո՞վ ես օգտակար համարում հոսքային ուսուցումը միասնական քննություններին պատրաստվելու հարցում:

- Միանգամայն օգտակար է
- Մասամբ է օգտակար
- Գրեթե օգտակար չէ
- Բացարձակապես օգտակար չէ

6. Ինչո՞ւ ես ընտրել այս հոսքը: Նշի՛ր հիմնական պատճառը:

- Ծնողներս են խորհուրդ տվել
- Ընկերներս են խորհուրդ տվել
- Այդ հոսքում խորությամբ ուսումնասիրվում են իմ սիրելի առարկաները
- Պատրաստվում եմ բուհի ընդունելության քննություններ հանձնել այն առարկաներից, որոնք այս հոսքում խորությամբ են ուսումնասիրվում
- Այլ պատճառ _____

Շնորհակալություն հարցաթերթը լրացնելու համար

Հավելված 2

Ուսումնասիրված ավորողների շրջանում թվով շատ դիմորդներ հավաքագրած բուհերի մասնագիտությունների ցանկը

